ԿՑՎՈՒՄ Է 2024Թ ՏԱՐԵԿԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆԸ

ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՏԱՐԵԿԱՆ ԶԵԿՈՒՅՑ

Տարվա բիզնես գործունեության արդյունքները

2024 թ.-ին Ընկերությունը շարունակել է ընդլայնել գերարագ օպտիկամանրաթելային ցանցի հասանելիությունը՝ այն հասցնելով Վայոց ձորի և Արմավիրի բոլոր քաղաքներ, ինչպես նաև մի շարք այլ մարզային համայնքներ: Ընկերության նորագույն 25 Գբ/վ թողունակությամբ NGN (Next Generation Network) ցանցը հասանելի է Հայաստանի բնակչության շուրջ 40%-ին՝ մոտ 335,000 տնային տնտեսության:

Տարվա ընթացքում Ընկերությունը իրականացրել է նաև իր պատմության ամենամեծ ցանցային ենթակառուցվածքների և ծրագրային ապահովման արդիականացման ծրագիրը՝ նպատակ ունենալով բարձրացնել ծառայությունների որակը և հաճախորդների սպասարկման մակարդակը:

Գործարկվել է ռազմավարական նշանակության երրորդ միջազգային կապուղին՝ ավելի քան 1 Տբ/վ թողունակությամբ, որը Հայաստանը Վրաստանի և Ռուսաստանի միջոցով կապում է Եվրոպայի ամենամեծ տվյալների փոխանակման կենտրոնին՝ Ֆրանկֆուրտին:

Բջջային ցանցի կառուցման և վերազինման աշխատանքների շրջանակում՝ Team-ի գերարագ շարժական ինտերնետը հասանելի է դարձել նաև Երևանի մետրոյի բոլոր կայարաններում՝ այդ թվում ստորգետնյա հատվածներում:

Հավատարիմ մնալով տեխնոլոգիական առաջատարի իր դերին՝ ընկերությունը 2024 թ.-ին նս ակտիվորեն խթանել է համակցված ու կոնվերգենտ փաթեթների, ինչպես նաև թվային ծառայությունների զարգացումն ու տարածումը:

Էկոլոգիապես մաքուր ապագային նայելով՝ Ընկերությունը ընդլայնել է Team Energy արագ լիցքավորման կայանների ցանցը՝ խթանելով էլեկտրական մեքենաների օգտագործումը Հայաստանում:

2024 թ.-ին «Տելեկոմ Արմենիա» ԲԲԸ-ն դարձավ առաջին ընկերությունը Հայաստանում, որը թողարկեց կայուն զարգացման պարտատոմսեր՝ աննախադեպ 75 միլիոն դոլարի ծավալով, ամրապնդելով իր հավատարմությունը՝ համատեղելու բիզնեսի աճը բնապահպանական և սոցիալական արժեքների հետ:

Ոլորտի լավագույն չափանիշների պահպանման, պրոֆեսիոնալիզմի բարձր մակարդակի և շարունակական բարելավման նպատակով, Ընկերությունը շարունակում է ներդնել միջազգային կառավարման ստանդարտներ՝ բավարարելով որակի, տեղեկատվական անվտանգության և շրջակա միջավայրի պահպանության պահանջները:

2023թ.-ին «Տելեկոմ Արմենիա» ԲԲԸ-ն ստացել էր ISO/IEC 27001:2013 հավաստագիր՝ հաստատելով տվյալների պաշտպանության բարձր մակարդակը: 2024 թվականին Ընկերությունը հաջողությամբ թարմացրել է սերտիֆիկացումը՝ ստանալով ISO 27001:2022, ինչը հաստատում է տեղեկատվական անվտանգության ժամանակակից չափանիշներին համապատասխանությունը: Ընկերությունը շարունակում է ապահովել տվյալների վստահելի պաշտպանություն հաճախորդների և գործընկերների համար:

Ընկերությունը արժանացել է նաև ISO 9001:2015 միջազգային հեղինակավոր հավաստագրի՝ որակի կառավարման ոլորտում բարձր չափանիշներ ապահովելու համար: Այս հավաստագիրը

շնորհվել է Եվրոպական Cert International միջազգային ճանաչում ունեցող սերտիֆիկացնող ընկերության կողմից:

➢ Բնապահպանական և սոցիալական ցուցանիշներ

«Տելեկոմ Արմենիա» ԲԲԸ-ն իր գործունեությունն իրականացնելիս առաջնորդվում է ոչ միայն շրջակա միջավայրի, սոցիալական պատասխանատվության և աշխատանքային անվտանգության ապահովման վերաբերյալ ՀՀ ներպետական օրենսդրությամբ, այլև սկսած 2022 թվականից մշակել և ներդրել է ՎՁԵԲ և ՄՖԿ Կատարողական Ստանդարտներին համահունչ գործառնական համակարգ, որի ներքո գործում է հետևյալ փաստաթղթային շրջանակը՝

1. Բնապահպանական և Սոցիալական Կառավարման Պլան
2. ԲՍԿՀ Ձնման ընթացակարգ և Ռիսկերի գրանցամատյան
3. Շահառուների ներգրավման պլան
4. Մտահոգությունների բարձրաձայնման Speak Up հարթակ (բողոքարկման մեխանիզմի և չհետապնդելու քաղաքականություն)
5. Բիզնես գործընկերների Վարքագծի կանոնակարգ և Կոմպլայենսի դրույթներ
6. Բիզնես Գործընկերների Ստուգման ընթացակարգ
7. Կաշառակերության և կոռուպցիայի կանխարգելման քաղաքականություն
8. Սեռական ոտնձգությունների բացառման քաղաքականություն
9. Անչափահասների աշխատանքի կանխարգելման քաղաքականություն
10. Հարկադիր աշխատանքի բացառման քաղաքականություն
11. Աշխատավորների միությունների խրախուսման քաղաքականություն
12. Գենդերային խտրականությունների բացառման քաղաքականություն
13. Համայնքների անվտանգության և առողջության պահպանման քաղաքականություն
14. Աշխատանքային անվտանգության և առողջության ապահովման քաղաքականություն և կառավարման պլան (ներառյալ ուսուցման, հետաքննությունների անցկացման կարգեր)
15. Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման քաղաքականություն
16. Անվտանգության կառավարման պլան
17. Արտակարգ իրավիճակների պատրաստվածության և արձագանքման պլան

Վերոնշյալ փաստաթղթային շրջանակը վերանայվում և բարեփոխումների է ենթարկվում տարեկան կտրվածքով, իսկ ոլորտի խնդիրների բացահայտման կամ արտակարգ իրավիճակների առաջացման դեպքում նաև ըստ անհրաժեշտության: Ընկերության բոլոր ստորաբաժանումների ղեկավարները և աշխատակիցները առանձնացված կամ համատեղված գործառույթներով ներառված են վերոնշյալ գործառնական համակարգի իրականացման ողջ գործընթացում:

Կարևորելով Հայաստանի դիրքավորումը համաշխարհային SS քարտեզի վրա՝ այս տարի Ընկերությունը դարձավ Ինֆորմացիոն տեխնոլոգիաների համաշխարհային կոնգրեսի գլխավոր տեխնոլոգիական գործընկերը, աջակցեց նաև Սևան Ստարտափ Սամիթ-ին, Իմըրջ կոնֆերանսին, Ձեռներեցության միջազգային գավաթին, ինչպես նաև Կորիզ համադպրոցական մրցույթին և Քեյս Քի-ին:

ԿՑՎՈՒՄ Է 2024Թ ՏԱՐԵԿԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆԸ

➢ Տարեկան բնապահպանական ցուցանիշների ամփոփ ներկայացում

Կայուն զարգացումը՝ Ընկերության ռազմավարության մաս

Կայուն զարգացումը ենթադրում է բիզնեսի ընդլայնում և եկամտի աճ՝ միևնույն ժամանակ կրճատելով դրա հետ կապված արտանետումներն ու հոգալով այն միջավայրի մասին:
«Տելեկոմ Արմենիա» ԲԲԸ-ի՝ վերջերս որդեգրած ռազմավարական նպատակներից մեկը հենց կայուն զարգացումն է, հիմնված բնապահպանական և սոցիալական կառավարման սկզբունքների վրա:

Հարկ է նշել, որ վերոնշյալ խնայողությունները կատարվել են Ընկերության գործունեության ընդլայնմանն ու ակտիվ տեխնիկական վերազինմանը զուգընթաց՝ ապահովելով կայուն աճ, որի վերաբերյալ քանակական տվյալները ներկայացված են ստորև՝

Ածխածնային արտանետումների և թափոնների կրճատում

Վերջին երկու տարիների ընթացքում Ընկերությունը ներդնելով բնապահպանական կառավարման համակարգը, կարողացել է կրճատել իր արտանետումները, Ընկերության թափոնները վերածել երկրորդային հումքի և այդ ծախսերի կրճատման արդյունքում ապահովել դրական ազդեցություն շրջակա միջավայրի վրա՝ բիզնեսը ընդլայնելուն զուգահեռ: Այսպես՝

- Պղնձե մալուխներից ստացվել է 18,855կգ պոլիմերային մնացուկ (պոլիմեր) և 20,000 կգ պղինձ
- Վերամշակվել է շուրջ 300կգ թուղթ և 5830 կգ ստվարաթուղթ
- E-sim գործարկելու շնորհիվ Ընկերությունը խուսափել է 557 կգ պլաստիկ քարտերի, այսինքն պլաստիկ աղբ ստեղծելուց
- Կրկնօգտագործման են հանձնվել շուրջ 11,522 հատ էլ. սարքավորումներ (Wi-Fi, routers):
- Ընկերության ավտոպարկում էլեկտրական մեքենաների թիվը հասել է 22,8%-ի և այս թիվը շարունակելու է աճել:
- Ընկերությունը էներգասպառման մեջ արևային արտադրանքի քանակը հասցրել է շուրջ 4,1%-ի՝ տեղադրելով արևային ՖՎ կայաններ 56 տեղամասերում: Այս թիվը շատ մոտ ապագայում նախատեսվում է հասցնել 100%-ի՝ մինչև 2050թ.ը բացառապես վերականգնվող աղբյուրներից էներգիա ստանալու նպատակով: Համեմատության համար 2022թ.-ին արևային արտադրանքի մասնաբաժինը Ընկերության էներգասպառման մեջ կազմում էր 0,21%, 2023թ-ին՝ արդեն 2,99%, իսկ 2024թ.-ին՝ 4,1%:
- Ընկերությունն իր գործունեությունից առաջացած CO_2 արտանետումները նախատեսում է 40%-ով կրճատել մինչև 2029թ.՝ միևնույն ժամանակ ակտիվ ընդլայնելով բիզնեսը:

Բնապահպանական նախաձեռնություններ և իրազեկվածության բարձրացում

2024թ. ընթացքում «Տելեկոմ Արմենիա» ԲԲԸ-ն միացել է բնապահպանական օրացույցի թվով երկու ամենակարևոր միջոցառումներին՝ ապրիլի 22-ին նշվող Երկրի օրվան և հունիսի 5-ին նշվող Շրջակա միջավայրի պահպանության միջոցառումներին:

Վերոնշյալ օրերին Ընկերության արտաքին և ներքին լսարանի համար կազմակերպվել են բնապահպանական իրազեկվածության բարձրացմանն ուղղված նախաձեռնություններ՝ հանրության ուշադրությունը սևեռելով Երկրի հիմնական բնապահպանական մարտահրավերներին և դրանց լուծման եղանակներին:

Ընկերության կայուն զարգացման վերաբերյալ հանձնառությունը նաև արտացոլված է Ընկերության պաշտոնական կայք էջում և հասանելի է հետևյալ հղումով՝ https://www.telecomarmenia.am/hy/sustainable-development/

ԿՑՎՈՒՄ Է 2024Թ ՏԱՐԵԿԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆԸ

- **Աշխատանքի անվտանգություն և առողջության պահպանում**

Հաշվետու տարվա ընթացքում ընկերության աշխատակիցների շրջանում
- մահվան ելքով պատահարներ չեն գրանցվել,
- սննդով պայմանավորված թունավորումներ չեն գրանցվել,
- համաճարակային իրավիճակներ չեն գրանցվել,
- ԷՄԴ ճառագայթման դեպքեր չեն գրանցվել:

Մտահոգությունների բարձրաձայնման Speak UP հարթակով ստացվել է թվով 4 բողոք տարբեր շահառուներից, որոնք դիտարկվել և քննարկվել են ըստ գործող ընթացակարգի և խնդիրներին տրվել են համապարփակ լուծումներ: Բողոքների կրկնման դեպքեր հաշվետու տարում չեն գրանցվել:

- **Գործունեության հիմնական ցուցանիշներ**

Շարժական կապ

Ընկերության շարժական կապի բաժանորդների թիվը 2024թ.-ին կազմել է 1,053,029 բաժանորդ, աճելով նախորդ տարվա նկատմամբ 1%-ով կամ 8,090 բաժանորդով: Մասնավորապես, զգալիորեն աճել է հեռախոսի միջոցով շարժական ինտերնետ օգտագործող բաժանորդների թիվը՝ 668,862: 2023 թ.-ի համեմատ արձանագրվել է աճ 1%-ով:

2024 թ.-ի տվյալների համաձայն ընկերությանը բաժին է ընկնում ՀՀ շարժական կապի շուկայի բաժանորդների 26%-ը:

2024թ.-ին շարժական կապի ծառայությունների մատուցումից և սարքավորումների իրացումից ստացված եկամուտները 2023 թ.-ի համեմատ աճել են 2%-ով և կազմել 19.8 մլրդ դրամ: «Տելեկոմ Արմենիա»-ին 2024թ.-ին բաժին է ընկել ՀՀ շարժական կապի շուկայի եկամուտների 20.8%:

Ընկերության 4G ցանցի բաժանորդների քանակը ցուցաբերում է կայուն աճ, տեխնոլոգիական առանձնահատկությունից ելնելով, ավելի համեստ աճի տեմպեր է ցուցաբերում 3G ցանցի բաժանորդների քանակը: 2G ցանցի բաժանորդների քանակը, պայմանավորված ժամանակակից տեխնոլոգիաներով, գնալով նվազում է: Ստորև աղյուսակով ներկայացված է տարբեր տարիներին տարեվերջի դրությամբ Ընկերության շարժական կապի բաժանորդների քանակը ըստ տեխնոլոգիաների.

	2019	2020	2021	2022	2023	2024
2G և 3G ցանցի բաժանորդներ	732,691	668,439	579,806	616,203	680,436	657,628
մասնաբաժինը ընդհանուր բաժանորդներում	*77.3%*	*73.9%*	*63.3%*	*64.3%*	*65.1%*	*62.5%*
4G ցանցի բաժանորդներ	215,099	236,250	334,430	342,090	364,503	395,401
մասնաբաժինը ընդհանուր բաժանորդներում	*22.7%*	*26.1%*	*36.5%*	*35.7%*	*34.9%*	*37.5%*

Շարժական ինտերնետից (տվյալների հաղորդման ծառայություններից) օգտվող բաժանորդների քանակը վերջին տարիներին կայուն աճել է՝ հասնելով ընդհանուր բաժանորդների թվի 74.4%-ին: Ստորև աղյուսակով ներկայացված է շարժական ինտերնետի բաժանորդների քանակի դինամիկան ըստ տարիների.

	2019	2020	2021	2022	2023	2024
շարժական ինտերնետ բաժանորդներ, որից	554,366	557,966	618,206	671,960	743,296	783,818
մասնաբաժինը ընդհանուր բաժանորդներում	*58.5%*	*61.7%*	*67.5%*	*70.1%*	*71.1%*	*74.4%*
բացառությամբ հեռախոսասարքի միջոցով օգտվողների	54,435	55,531	59,284	79,314	82,565	114,956
հեռախոսասարքի միջոցով օգտվողների	499,931	502,435	558,922	592,646	660,731	668,862

Ընկերությունը, հավատարիմ մնալով իր որդեգրած քաղաքականությանը, 2024թ.-ին ևս շարունակեց տրամադրել իր բաժանորդներին որակյալ կապ, առաջարկելով հարմարավետ

փաթեթներ և ծառայություններ: Հիմնական առաջարկները ուղղված էին համակցված փաթեթների օգտագործողների քանակի ներթափանցելիության աճին և առաջխաղացմանը, շարժական ինտերնետի որակյալ ծառայությունների մատուցմանը:

Առաջինը Հայաստանի հեռահաղորդակցության ոլորտում Ընկերությունը 2023թ.-ին գործարկեց նորարական Team Energy նախագիծը, որտեղ հատվում են հեռահաղորդակցությունը, էներգետիկան և էկոլոգիան: Այս նախագիծը հնարավորություն է տալիս խթանել և հեշտացնել էլեկտրական մեքենաների օգտագործումը Հայաստանում՝ զգալիորեն կրճատելով օդի աղտոտվածությունը և տրանսպորտային ծախսերը: Team Energy էլեկտրական մեքենաների լիցքավորման կայանների ցանցն արդեն հասանելի է ՀՀ ողջ տարածքում: Իսկ Team Energy հավելվածի միջոցով հնարավոր է գտնել մոտակա լիցքավորման կետերը, կատարել լիցքավորում և վճարել բանկային քարտի միջոցով, իսկ «Տելեկոմ Արմենիա» ԲԲԸ բաժանորդ լինելու դեպքում՝ նաև Team-ի հեռախոսահամարի հաշվեկշռից:

Դեռևս 2022 թվականին Ընկերությունը ձեռք էր բերել նոր հաճախականային տիրույթ՝ մատուցված ծառայությունների որակը և ծավալը մեծացնելու նպատակով: Ընկերությանը հատկացված հաճախականային տիրույթը նախորդ 2 տարիների ընթացքում փոփոխության չի ենթարկվել: Մանրամասները ներկայացված են ստորև աղյուսակում.

Frequency Band	Bandwidth	Allocated spectrum range
Band 1 (2100 MHz)	30 MHz	UL: 1965 MHz – 1980 MHz (Δ =15 MHz)
		DL: 2155 MHz – 2170 MHz (Δ =15 MHz)
Band 3 (1800 MHz)	60 MHz	UL: 1735 MHz – 1765 MHz (Δ =30 MHz)
		DL: 1830 MHz – 1860 MHz (Δ =30 MHz)
Band 8 (900 MHz)	25 MHz	UL: 890.0 MHz – 902.5 MHz (Δ =12.5 MHz)
		DL: 935.0 MHz – 947.5 MHz (Δ =12.5 MHz)
Band 28 (700 MHz)	40 MHz	UL: 713 MHz – 733 MHz (Δ =20 MHz)
		DL: 768 MHz – 788 MHz (Δ =20 MHz)
Band 31 (450 MHz)	7.5 MHz	UL: 463.35MHz – 467.1MHz
		DL: 453.35MHz – 457.1MHz

Ամրակցված կապ

2024թ.-ին «Տելեկոմ Արմենիա» ԲԲԸ-ի ամրակցված կապի ծառայությունների մատուցումից և սարքավորումների իրացումից ստացված եկամուտը կազմել է 15.3 մլրդ դրամ, գրանցելով 5% տարեկան աճ:

Ամրակցված ինտերնետի բաժանորդների թիվը 2024թ.-ի դրությամբ 97.8 հազար է, ինչը 3%-ով ավել է 2023թ.-ի համեմատ:

ԿՑՎՈՒՄ Է 2024Թ ՏԱՐԵԿԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆԸ

2024 թ.-ի արդյունքում «Տելեկոմ Արմենիա»-ին բաժին է ընկնում ամրակցված ինտերնետի շուկայի բաժանորդների 32.2%-ը, նաև ամրակցված ինտերնետի շուկայի ծառայություններից ստացված եկամուտների 23.6%-ը:

Ընկերությունը շարունակում է նոր գերարագ FTTH ցանցի ընդլայնումը ՀՀ ողջ տարածքում: FTTH ցանցի հասանելիությամբ ապահովված տնային տնտեսությունների քանակը 2024թ.-ի վերջի դրությամբ կազմել է 335 հազար:

Ամրակցված կապի բաժանորդներ

2024թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության ամրակցված կապի բաժանորդների քանակը կազմել է 276,580, որը նախորդ տարվա ցուցանիշի նկատմամբ նվազել է 7%-ով՝ հիմնականում պայմանավորված ձայնային ծառայություններից օգտվող բաժանորդների քանակի նվազմամբ:

Ձայնային ծառայություններից օգտվող բաժանորդների քանակի նվազումը հիմնականում պայմանավորված է բաժանորդների՝ ամրակցված կապից դեպի շարժական կապ միգրացիայով, ինչպես նաև OTT ձայնային պլատֆորմների ընդլայնվող հասանելիությամբ: Ձայնային ծառայություններից օգտվող բաժանորդների 84%-ը բաժին է ընկնում անհատներին, իսկ մնացածը՝ Ընկերություններին և պետական կառույցներին:

Ստորև աղյուսակով ներկայացված է ամրակցված ինտերնետ հասանելիության ծառայություններից օգտվող բաժանորդների քանակի բացվածքը ըստ տեխնոլոգիաների[1].

	2019	2020	2021	2022	2023	2024
ինտերնետ հասանելիության ծառայություններից օգտվող բաժանորդներ, որից	110,201	105,810	99,515	92,907	94,772	97,827
ADSL տեխնոլոգիայով	83,856	71,065	53,056	39,184	31,099	23,922
մասնաբաժինը ընդհանուր ինտերնետ բաժանորդներում	*76%*	*67%*	*53%*	*42%*	*33%*	*24%*
VDSL տեխնոլոգիայով	9,035	14,039	19,955	22,748	19,757	18,134
մասնաբաժինը ընդհանուր ինտերնետ բաժանորդներում	*8%*	*13%*	*20%*	*24%*	*21%*	*19%*
FTTB տեխնոլոգիայով	14,711	19,326	24,353	23,767	23,543	21,722
մասնաբաժինը ընդհանուր ինտերնետ բաժանորդներում	*13%*	*18%*	*24%*	*26%*	*25%*	*22%*
FTTH տեխնոլոգիայով	-	-	1,251	6,731	20,073	33,879
մասնաբաժինը ընդհանուր ինտերնետ բաժանորդներում	*-*	*-*	*1%*	*7%*	*21%*	*35%*
այլ տեխնոլոգիաներով	2,599	1,380	900	477	300	170
մասնաբաժինը ընդհանուր ինտերնետ բաժանորդներում	*2%*	*1%*	*1%*	*1%*	*0%*	*0%*

Դիտարկված պատմական ժամանակաշրջանում ամրակցված ինտերնետի բաժանորդների թվում ADSL տեխնոլոգիայով բաժանորդների քանակը նվազել է տարեկան 22% միջին տեմպով (CAGR): Նույն ժամանակաշրջանում VDSL և FTTB տեխնոլոգիայով ինտերնետի բաժանորդների քանակը աճել է համապատասխանաբար 15% և 8% տարեկան միջին տեմպով (CAGR):

ADSL տեխնոլոգիայով բաժանորդների մասնաբաժինը ամրակցված ինտերնետի բաժանորդների քանակում 2024թ.-ի ժամանակաշրջանի վերջի դրությամբ կազմել է 24%, որը 2023թ.-ի ցուցանիշից պակաս է 9 տոկոսային կետով: Փոխարենը աճում է FTTH տեխնոլոգիայով ինտերնետի բաժանորդների մասնաբաժինը:

Ընկերությունը իր բաժանորդներին առաջարկում է նաև մի շարք թվային ծառայություններ:

Ընկերության բաժանորդները հնարավորություն ունեն կոմունալ և այլ ծառայությունների դիմաց վճարումներ կատարել «Թիմ Փեյ» ՓԲԸ վճարահաշվարկային ընկերության գրասենյակներում, որոնք գործում են Ընկերության մասնաճյուղերում:

[1] **Աղբյուր՝** Ընկերության տվյալներ

ԿՑՎՈՒՄ Է 2024թ ՏԱՐԵԿԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆԸ

Շարժական կապի բաժանորդները հնարավորություն ունեն Team Energy հավելվածի միջոցով իրենց բջջային հեռախոսահամարի հաշվեկշռից լիցքավորել էլեկտրական մեքենաները 60-ից ավել լիցքավորման կայաններում:

Ընկերության բաժանորդների համար գործում է նաև Team Բոնուս խրախուսական ծրագիրը, որը հնարավորություն է տալիս կատարված ծախսերի դիմաց կուտակել բոնուսային միավորներ և դրանք փոխանակել մի շարք ծառայություններով (բջջային ինտերնետի փաթեթներ, բոնուսներ և հատուկ առաջարկներ գործընկերների հետ համագործակցելով):

➢ Էական դատական գործերի վերաբերյալ տեղեկատվություն

1. 2022թ.-ի ապրիլին «Խասուրո Գրուպ» ՓԲԸ սնանկության գործով կառավարիչ՝ Արմինե Մովսիսյանը հայց է ներկայացրել դատարան ընդդեմ Ընկերության 1,170,000,000 ՀՀ դրամ բաց թողնված օգուտի տեսքով պատճառված վնասի հատուցման պահանջով (քաղաքացիական գործ թիվ ԵԴ/17676/02/22): Նշված գումարի չափով վնասն, ըստ հայցվորի, գոյացել է Ընկերության կողմից «Խասուրո Գրուպ» ՓԲԸ-ի թվով մեկ և Արթուր Խաչատրյանի օգտագործմանը հանձնված թվով 4 ֆիքսված կապի հեռախոսահամարները Ընկերության կողմից ենթադրաբար ապօրինի անվանափոխելը, ինչի պատճառով «Խասուրո Գրուպ» ՓԲԸ 2016-2021թթ. ընթացքում չի կարողացել տնտեսական գործունեություն իրականացնել (ուղևորափոխադրման տաքսի ծառայություններ մատուցել)՝ կրելով 1,170,000,000 ՀՀ դրամի չափով վնաս:

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի 17.10.2024թ. վճռով «ԽԱՍՈՒՐՈ ԳՐՈՒՊ» ՓԲԸ սնանկության գործով կառավարիչ Արմինե Մովսիսյանի հայցն ընդդեմ Ընկերության՝ պատճառված վնասը հատուցելու պահանջի մասին ամբողջությամբ մերժվել է:
«Խասուրո Գրուպ» ՓԲԸ սնանկության գործով կառավարիչ՝ Արմինե Մովսիսյանը 23.12.2024թ. վերաքննիչ բողոք է ներկայացրել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի 17.10.2024թ. վճռի դեմ:
ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշմամբ վերաքննիչ բողոքն ընդունվել է վարույթ: Վերաքննիչ բողոքը գտնվում է քննության փուլում:
Ընկերության գնահատմամբ դատական գործն հօգուտ հայցվորի վճռվելու հավանականությունը ցածր է:

2. 2020թ.-ի հուլիսին «Յուքոմ» ՓԲ ընկերությունը հայցադիմում է ներկայացրել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան ընդդեմ «Թիմ» ՓԲԸ-ի, երրորդ անձիք՝ «Վեոն Ամստերդամ Բ.Վ. մասնավոր» ՍՊ ընկերության, «Վիմպել Քոմունիքեյշն» ԲԲ ընկերության, Հայկ Եսայանի, Ալեքսանդր Եսայանի՝ «Թիմ» ՓԲԸ կողմից «Վեոն Արմենիա» ՓԲԸ բաժնետոմսերի ձեռքբերման բանակցային գործընթացում «Յուքոմ» ՓԲ ընկերությանը պատկանող չբացահայտված տեղեկատվության առկա պայմաններում օգտագործումը և «Թիմ» ՓԲԸ հիմնադիրների կողմից «Յուքոմ» ՓԲ ընկերության հանդեպ ունեցած ֆիդուցիար պարտավորությունների խախտումն անբարեխիղճ մրցակցություն հանդիսանալու, «Թիմ» ՓԲԸ կողմից «Վեոն Արմենիա» ՓԲ ընկերության բաժնետոմսերի ձեռքբերման 29.10.2020 թվականի գործարքն անվավեր ճանաչելու և անվավերության հետևանքներ կիրառելու պահանջների մասին (քաղաքացիական գործ թիվ ԵԴ/20890/02/20):

Նշված քաղաքացիական գործը գտնվում է քննության փուլում:

3. 2021թ.-ի փետրվարին «Յուքոմ» ՓԲ ընկերությունը հայցադիմում է ներկայացրել ՀՀ վարչական դատարան ընդդեմ ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության

պետական հանձնաժողովի, երրորդ անձինք «Թիմ» ՓԲԸ-ի, Հայկ Եսայանի, Ալեքսանդր Եսայանի՝ ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովին բարենպաստ վարչական ակտ ընդունելուն պարտավորեցնելու պահանջի մասին:

ՀՀ վարչական դատարանի կողմից 11.05.2023թ.-ին կայացված վճռի համաձայն՝ «Յուքոմ» ՓԲԸ հայցը բավարարվել է: ՀՀ մրցակցության պաշտպանության հանձնաժողովին պարտավորեցվել է «Թիմ» ՓԲԸ, Հայկ Եսայանի և Ալեքսանդր Եսայանի կողմից «ՎԵՈՆ Արմենիա» ՓԲԸ բաժնետոմսերի ձեռքբերմանն ուղղված գործողությունները որակել որպես չբացահայտված տեղեկատվության օգտագործմամբ և ֆիդուցիար պարտավորությունների խախտման դրսևորմամբ անբարեխիղճ մրցակցություն՝ անվավեր ճանաչելով ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի 23.12.2020թ. թիվ 393-Ա որոշումը:
ՀՀ վարչական դատարանի վերը նշված վճռի դեմ վերաքննիչ բողոքներ են ներկայացրել ՀՀ մրցակցության պաշտպանության հանձնաժողովը, «Թիմ» ՓԲԸ, Հայկ Եսայանը և Ալեքսանդր Եսայանը:
ՀՀ վերաքննիչ վարչական դատարանը 29.01.2024 թվականի որոշմամբ վարչական գործով պատասխանող ՀՀ մրցակցության պաշտպանության հանձնաժողովի, ինչպես նաև երրորդ անձինք «Թիմ» փակ բաժնետիրական ընկերության, Հայկ Հովիկի Եսայանի, Ալեքսանդր Հովիկի Եսայանի ներկայացրած վերաքննիչ բողոքները բավարարել է մասնակիորեն՝ թիվ ՎԴ/0693/05/21 վարչական գործով ՀՀ վարչական դատարանի 11.05.2023թ. կայացված վճիռը՝ Հայկ Եսայանի և Ալեքսանդր Եսայանի կողմից «ՎԵՈՆ Արմենիա» ընկերության բաժնետոմսերի ձեռքբերմանն ուղղված գործողությունները որպես չբացահայտված տեղեկատվության օգտագործմամբ և ֆիդուցիար պարտավորությունների խախտման դրսևորմամբ անբարեխիղճ մրցակցություն որակելուն պատասխանողին պարտավորեցնելու մասին հայցը բավարարելու և դրա հետ կապված դատական ծախսերը բաշխելու մասով, բեկանել է: ՀՀ վարչական դատարանի 11.05.2023թ. թիվ ՎԴ/0693/05/21 վարչական գործով կայացրած վճիռը՝ «Թիմ» փակ բաժնետիրական ընկերության կողմից «ՎԵՈՆ Արմենիա» ընկերության բաժնետոմսերի ձեռքբերմանն ուղղված գործողությունները որպես չբացահայտված տեղեկատվության օգտագործմամբ և ֆիդուցիար պարտավորությունների խախտման դրսևորմամբ անբարեխիղճ մրցակցություն որակելուն պատասխանողին պարտավորեցնելու մասին հայցը բավարարելու և դրա հետ կապված դատական ծախսերը բաշխելու բողոքարկված ու չբեկանված մնացած մասով, թողել է անփոփոխ:
ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի նշված որոշման անբարենպաստ մասի դեմ պատասխանող՝ ՀՀ մրցակցության պաշտպանության հանձնաժողովը, երրորդ անձինք՝ «ԹԻՄ» ՓԲԸ, Հայկ Հովիկի Եսայանը, Ալեքսանդր Հովիկի Եսայանը 29.02.2024թ. ներկայացրել են վճռաբեկ բողոքներ:
ՀՀ վճռաբեկ դատարանի որոշումներով պատասխանող՝ ՀՀ մրցակցության պաշտպանության հանձնաժողովի երրորդ անձինք՝ «ԹԻՄ» ՓԲԸ-ի, Հայկ Եսայանի, Ալեքսանդր Եսայանի վճռաբեկ բողոքները վարույթ ընդունելը մերժվել են:

4. 2020թ.-ի սեպտեմբերին «Յուքոմ» ՓԲ ընկերությունը հայցադիմում է ներկայացրել ՀՀ վարչական դատարան ընդդեմ ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի, երրորդ անձինք «Թիմ» ՓԲԸ-ի, Ընկերության՝ ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի 09.07.2020թ. թիվ 282-Ա որոշումը վերացնելու պահանջի մասին (վարչական գործ թիվ ՎԴ/6727/05/20):

ՀՀ վարչական դատարանի 11.11.2022թ.վճռով «Յուքոմ» ՓԲԸ հայցն ամբողջությամբ մերժել է:
ՀՀ վարչական դատարանի վերը նշված որոշման դեմ վերաքննիչ բողոք է ներկայացրել

«Յուքոմ» ՓԲԸ:
ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 20.12.2023թ. որոշմամբ «Յուքոմ» ՓԲԸ վերաքննիչ բողոքը մերժվել է, իսկ ՀՀ վարչական դատարանի 11.11.2022թ.վճիռը թողնվել անփոփոխ՝ օրինական ուժի մեջ:
ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի նշված որոշման դեմ վճռաբեկ բողոք է ներկայացրել «Յուքոմ» ՓԲԸ:
ՀՀ վճռաբեկ դատարանի 03.04.2024թ.որոշմամբ «Յուքոմ» ՓԲԸ վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժվել է:

Ծանոթություն.

Սույն հաշվետվության մեջ նշված թիվ 2, 3 և 4 գործերը քննվում են դռնփակ դատական նիստերում, և դրանց վերաբերյալ տեղեկատվության տրամադրումը սահմանափակված է օրենքով: Հրապարակման ենթակա են բացառապես դատական ակտերի (վճիռների) եզրափակիչ մասերը:

«Տելեկոմ Արմենիա» ԲԲԸ, ՀՀ, ք. Երևան, Ազատության պող. 24/1, 0014 Հեռ.՝ 010 41 04 10
"Telecom Armenia" OJSC, 24/1, Azatutyan ave., Yerevan 0014, RA Tel.: 010 41 04 10

ԿՑՎՈՒՄ Է 2024թ ՏԱՐԵԿԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆԸ

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁԱՆՑ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Իմ լավագույն տեղեկացվածության համաձայն ֆինանսական հաշվետվությունները ճշգրիտ և լիարժեք ձևով արտացոլում են թողարկողի ակտիվների և պարտավորությունների, ֆինանսական վիճակի, եկամուտների և ծախսերի իրական պատկերը, իսկ կառավարման մարմինների միջանկյալ զեկույցում ներառված տեղեկությունները ճշգրիտ և լիարժեք են:

«Տելեկոմ Արմենիա» ԲԲԸ
Հայկ Եսայան
Գլխավոր տնօրեն

Մայիս 30, 2025թ.